

ամենեցուն զոցա չեն 'ի միջի: Այսորիկ յիշա-
տակեալքն. իսկ չյիշատակեալքն քանիսն եւս:
Նա եւ են, որ արդ եւս յայտնեցան խառն ընդ
թարգմանութիւնս վիճակեալս 'ի նոյն աղէտս,
յորոց եւ տպագրեցան եւս. եւ են աներկբայ ա-
ռաւելագոյնք՝ չե 'ի յայտ եկեալք, եւ 'ի տեղիս
տեղիս լքեալք անտես եւ անիշում եւ կամ ան-
ժանօթք 'ի մէջ՝ ակն ունելով մահու. կամ
յարութեան: Արդարեւ քան մրրկալից ժամա-
նակին թարգմանչաց մեծ եւս է կորստեանդ
զեան. որպէս զի եւ բազմագոյնք 'ի ճողոպտիւրոցն
'ի ձեռաց սորին թերիք կամ աղարտեալք հասին
առ մեզ: Այսպէ ինչ անհաւանութեան ասել՝
զի զէթ առանց ճիշդ ֆաստ մատենագրութիւնք
հինգերորդին փարթամագոյն լինէին մեզ քան
զայլ ամենայն դարուց առանձինն. թո՛ղ զը-
թարգմանութիւնսն ամբաս եւ զանագանս ըստ
նիւթոցն:

Շարայարեղի

Իսկ սակաւդ այդ առ մեզ հասեալ գրեան
այնպէս է յաչ մեր, որպէս աղամանդ յաչս
մեծատանց աշխարհի: Գանձ անդին են այնո-
քիկ, եւ շատք առ հանդիսանալ մեզ վիպ գեր
'ի վերոյ հանճարոյ իմաստութեան եւ մտաց
հարց մերոց, եւ առ անմահացանել զփառս
նոցա: Թէպէտ եւ չիցեն բոլորեքեան առանձինն
շտեմարանք ուրոյն մասանց կամ ուղղացն զը-
պրութեան, այլ բաց 'ի պէտպէս թերութեանց
ինչ, որ արգասիք են ոչ կարի յառաջագեմ
զարգացման դարուն ինքեան իրեւ զմերս, լի
են խոր հմտութեամբք պատմականին, իմա-
տասիրականին, բանաստեղծականին, նկարա-
գրականին, ճարտասանականին, բնաբանակա-
նին, հանդերձ այլովք բազմօք խառնելովք ընդ
միմեանս գեղեցիկ յօդս: Թէ կամիք, մանր
իսկ հաշուեցուր:

Հ. Վարդան Սոմոնեան

ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ԸՆԾԱՑՈՒԱԾ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ ՅՈՅՆ ԲՆԱԳԻՐՆ

ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱՅ ԵՂԱԾ ԿՐԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

(Տես հտ. ԾԱ յ'էջ 565)

ԱՅՅԺՄ տեսնենք թէ՛ լատիներէն եւ հա-
յերէն խմբագրութիւններն ի՞նչ աղերս եւ հա-
մեմատութիւն ունին իրարու հետ:

Լատին խմբագրութիւնն՝ 48. Սաղմոսի
« Մարգ ի պատուի էր եւ ոչ իմացա », եւ
այլն, խօսքերով կը սկսի, եւ Արուսեկի ծագ-
ման եւ անկման պատմութիւնը կ'ընէ A, B,
C, Թուահամարներու մէջ. իսկ D եւ E Թուա-
համարներում՝ նախամարդոյն խաբուելուն եւ
զրախտէն արտորուելուն վրայ կը խօսի, որոնք
հայերէն թարգմանութեան, այն է Ի. Ոս-
կեփորիկի մէջ կը պակսին: F. Թուահամա-
նէ՛ թէ 'ի Ժողովողէ ճառընտրին եղէ այն մու-
ծեալ որպէս 'ի դէպ վայրի, եւ սեփական նիւ-
թոյ բանից հայրապետին. զի զի՞նչ այլ յայտ առ-
նիցն առընթերակայ նշանէ քան գոյն:

1. Տպգր. Լուգոնի 1677:

րին առաջին տողով կը սկսի կատարեալ համա-
ձայնութիւնն երկաքանչիւրոց մէջ, այսինքն է
բառ առ բառ նոյն են՝ Լատ. վերջի դատաս-
տանի պարբերութեամբ կը վերջանայ, որուն
առաջին տողերը նոյն են հայ թարգմանութեան
յէջ 68 չորրորդ, եւ այլն տողերուն, բայց
տասն տողի մէջ կ'աւարտի. մինչդեռ հայն 6
երես տեղ մի կը զբաւէ, որոնք նոյնպէս կը
գտնուին Միսրոք երիցու Պատմագրութեան
մէջ, բառ առ բառ:

Անուանց եւ տարեթիւոց, — այսպէս եւ մի
քանի էջ առանդութեանց մէջ, — շատ տարբե-
րութիւններ կան. օրին. Լատ. յէջ 729, Նոյի
որդին Lonitun կ'անուանէ, որ հայերէնի մէջ
Մանիստն գրուած է: Վերջոյն ճշգրտութիւնը
կ'ապացուցուի այնու եւս զի Միքայէլ ասորին
այսպէս կ'ուղղագրէ: Բ. Լէոն Ալլատիոսի քով

իսկ (ad Eustath. hexaëmeron, p. 236) նոյնպէս Μανήστον կը գտնենք¹։ Թէլ 727 լատ. Ազամայ աղէկիւր Deppora կոչուած է. իսկ ի հայն՝ Լեպորա գրուած է. Թունաց աւանդութեան մէջ իսկ այսպէս է Δεβόρα. Եւսթիքիոս ժամանակագիրը Laphara կը գրէ²։ Թէլ 728 լատ. Cusunisden, հայը՝ Խոնզմեզտ երկիր։ Լ. Elisdenը՝ հայը Մեզմեզտի, Cosdronը՝ Խոսրոն, Edroësanը՝ Եւզրազէն է. Թէլ 728 Լ. Cuset է, հայն՝ Խոսիսի կ'անուանէ Մեծին Աղեքսանդրի մայրը, — որ էր զուտոր փոլ Թազաւորի Եւթովկացոց, յաւելուածով « որ կոչի Ուիմւ պիտադայ »։ Աղեքսանդրի դրան անունը, յորում արգելեալ փակեց զազգս մարդակերաց, լատինի մէջ Assurim է, իսկ ի հայունս՝ Մաւմազին, « որ է տարոյս վարդ ? »։ Հայն, յէլ 18, հօն արգելեալ ազգաց թիւը միայն մէջ կը բերէ 22. իսկ լատինն՝ յանուանէ կը յիշէ զանոնք, 24 ազգս։ Սա. Օրբէլեան՝ 22 թուովը հային կը համաձայնի, իսկ աւանդ յականէ յանուանէ յիշատակութեամբը³ լատին թարգմանութեան։ Հայն՝ յէլ 24—25 չուսմոց և Պարսից թագաւորութեան անկումն՝ « յեւս է պարուն 700ին և ի սկիզբն ԸՃ. ին (300) կը գնէ. լատինը՝ Պարսից միայն կը յիշէ, առանց թուականի։ Էրրիա=Եւթրէք (այսինքն է Մեծինէտ էլ-Նարի), Հայք և Թուրքք կը յիշուին ի հայ թարգմանութեան, որք լատ. մէջ կը պակսին։ Թէլ 730 լատ. Onagrar կ'անուանէ իսմայէլացոց տիրող ցեղը. հայն Սցիաք կը գրէ։ Հայ. յէլ 28 ունի առնութեւր Եզրպտոս անուան և Մար, բայց կը

պակասին աստ՝ լատ. մէջ յիշուած Սպանիա, Գաղղիա, Գերմանիա, Ազարոնիա, Սիկիլիա և այլք։ Թէլ 732, որ լատինը rex Grechorum sive Romanorum կը գրէ, հայն յէլ 40 յաւելցուցած է « որ են փռանկը »։ Մեծին Ներսիսի տեսլեան մէջ ևս, — յէլ 90, — յիշուած է այս անունս։ Այս էջերում երկու թարգմանութեանց մէջ իսկ խաչակրաց արշաւանքը սոց կերպով կը նկարագրուի այլազգեաց զէմ. բայց լատինն աւելի հնութեան եւ քննյթ ունի։ Հայ. էլ 40 և 41 այն հատուածները, — յորս Հուսումնոց թագաւորի զօրանալն, — 3 թագաւորաց հետ գաշակցիլն, — « Մըզլուպ » (*) գետի վրայ տուած պատերազմն, — Անտիոքայ դիմացի լերան վրայ բարձրանալն և Միքայէլ հրեշտակի վերակացութիւնը, — յոյժ հետաքրքրական աղբրէր մ'առնուած են և լատիններէնի մէջ կը պակսին յայտմ վայրի։ Աղեքսանդրի յիշեալ զանէն արձակուած բարբառոսաց և անոնց զործած անլուր աւերմունքը, այսպէս և այն եօթն զուխ հատուածներն, որոց խորագիրներն են « Թագաւորի որդին » որ զորոշեալ է 2ի, — Այս Մաւգաղ քաղաքն է, — Այս Եզն քաղաքն է, — Այս Մերկ քաղաքն է, — Այս Բարեմիտ քաղաքն է, — Վասն պիղծ կնոջն, — Այս Քարց քաղաքն է, — Այս Զօրաշոր քաղաքն է, — լատիններէնի մէջ կը պակսին և Այս յաւելուածներս խաչակրաց արշաւանքէն վերջ եղած են, և բիւզանդական կայսերաց վերայ յարմարուած կ'երևին. զի յէլ 49 կը յիշուի զպարումն հարստութեան « Էդմէխանուս »։ Թէլ 50 Մաւգաղ թագաւորի համար կ'ըսուի, թէ Կ.Պոլսոյ մէջ թագաւորած ժամանակ՝ 42, 000 հոգի ի սուր կոտորիցան և, նա 3 մանուկ կարծ թագաւորութեամբ զրաւեցաւ ի կենաց։ Եզն թագաւորի համար կ'ըսուի, թէ միանալով ասոր հետ թագաւորըն Արեմոյի՝ կու գան կը մանեն յՍիկեդոնան (Սիկեդիւրն), և կը թագաւորէ նա 12 տարի։ Մերկ թագաւորին համար կ'ըսուի, « որ կոչի աղբառ », 12 տարի թագաւորեց։ Ասոր ժամանակ նստաւ այն բարի պարտիարքը, որ առաքինութեամբը յար և նման էր Հարցն առաջնոց։ Բարեմիտ թագաւորին՝ 32 տարի թագաւորել կը տրուի, և անոր թագաւորութիւնը.

1. S^ho Fabricius. cod. pseudoeipigr. Vet. Test. t. I, p 276, 277.

2. Անդ. հտ. Ա. էլ 125, 128:

3. Որոնք են « Գող և Մաղող, Անիգ, Ագիգ, Աբիազ, Դիփոր, Փորինացիք, Ալրենացիք, Հոնք, Փարգիացիք, Դեկղիմացիք, Սարմազք, Գարմազացիք, Մարգակներ, Թեթղէացիք, Զարմետացիք, Կաքունացիք, Ամազարդք, Թարսիացիք, Ալանք, Փասկիլիկացիք, Արգնէացիք, Սատառէացիք »:

Այս անուանց առաջին չորսը միայն նման են Մեթողիտի լատին թարգմանութեան յէլ 729 անուանց իսկ այլք առհասարակ կը տարբերին:

կ'անցնի իւր շար կնոջ ձեռք, որ էր աղանդաւոր, անատուած և պղծութեամբ լցոյց բոլոր տէրութիւնը, եռամեայ թագաւորութեան միջոցին: Ասոր ժամանակ ծովը ծածկեց, կ'ըսուի, զԷ.Պոլիս, և յետոյ տեսնուեցաւ Կոստանդնուսի սիւնը: Եւ 5 հազար թագաւորին համար կ'ըսուի, թէ թագաւորական աթոռը փոխեց Է.Պոլսէն ի Նիկովիդիա, և թագաւորեց 20 տարի:

Եւ 55, Զօրաշոր թագաւորին օրերը, կ'ըսուի, թէ Ս. Խաչատրայտի կտորներն աշխարհիս ամէն կողմէն զալով՝ միացան. իսկ թագաւորն հանեց զնա ի Գողգոթայ, ուր հրեշտակը Աստուծոյ՝ առնելով զհոգի թագաւորին, զթագն և զխաչ՝ տարան յերկինս, ուստի օր մի պիտի գայ՝ լինել կարապետ գալստեան Քրիստոսի: Ստ. Օրբէլեան 1, այս հատուած ամբողջապէս մէջ կը բերէ, բայց տարբեր շարաքանութեամբ: Այս բանն Ագաթանգի գուշակութեանց մէջ՝ Տիբերիոսի բիւզ. բարեպաշտ կայսեր մ'ընծայուած է, և թագն Կոստանդիանոսի մեծի: Այստիւր աւանդութիւնս՝ լատիներէն թարգմանութեան մէջ, յէջ 733, Նեոի երևման հատուածէն վերջը գրուած է՝ համառօտիւ: Մեծին Ներսիսի կենսագիրն՝ ընդ հակառակն ունի, այսինքն է. «Յորժամ զարձից (խաչն) ի Պարսկաց՝ այլ ոչ ևս զարձից յԵրուսաղէմ, և Երուսաղէմ ոչ ևս կացցէ յիշխանութեան Յունաց, և Խմայէլացիք տիրեսցնեն նմա»:

Այս իսկ դիտելու ենք, որ Ստ. Օրբէլեան և Մեսրոպը Երէջ իրարու հետ խիստ քիչ բառական նմանութիւն ունին. սակայն ահոնց աղերսն աւելի սերտ է Ի. Ոսկեփորիկիւն, այն է անվաւերական Մեթոդիոսի հայերէն թարգմանութեան հետ: Երկաքանչիւրն որչափ որ ինքնուրոյն շարաքանութեամբ իրարմէ կը տարբերին, ինչպէս նաև զիպաց յառաջերորդութեան կարգաւ, բայց իբրև հասարակաց՝ յազբեր՝ կու

գան կը միանան Ի. Ոսկեփորիկի աւանդածին հետ, զորս կրնանք առանց երկբայութեան ոչ միայն իբրև ողջ ներկայացուցիչ ընդունել Մեթոդիոսի յայն կամ ասորի բնագրի մի, այլ նոյն իսկ իբրև երկրորդ խմբագրութիւն մի՝ ԺԳ. զարէն վերջ, կամ անկէ քիչ յառաջ հանդիպած զիպաց:

Երկրորդ խմբագրութիւն մ'ըլլալու առաջին փաստն այն է, որ յիշեալ հայերէն թարգմանութիւնը, — ըստ ամբողջութեան, — լատին թարգմանութեան հետ աւելի մերձաւորութիւն ունի, քան թէ Ներսիսի Տեսլեան, կամ Սիւնեաց Պատմագրութեան, որոնք, — ըստ վկայութեան Ստ. Օրբէլեանի, — Ը. զարու հայերէն թարգմանութենէ մ'առնուած են, այն է՝ Ստեփաննոսի Սիւնեացոյ. և ըստ ինքեան իրարու աւելի մօտ պիտի ըլլային, եթէ ուրիշ պատճառ մի չլինէր ի միջի: Արդ՝ ըստ իս՝ կամ այն է, թէ Մեսրոպը և Օրբէլեան հաւատարմութեամբ և ըստ բնագրին մէջ բերած չեն գայնա, այլ ուրոյն իւր շարագրութեամբ յարմարելով՝ զայն ըստ մասին և եթէ մէջ բերած են. և կամ այն է, թէ այդ հեղինակները՝ Սիւնեցոյ հայ թարգմանութիւնը զիմացնին ունեցած չեն: Բ. Ոսկեփորիկի թարգմանութեան

ռաւեցոյն Հիպոդոիտեայ եպիսկոպոսի ասուցեալ վասն կատարածի աշխարհիս և վասն Նեոիմն և վասն միասնեալ գալստեան Քրիստոսի Աստուծոյ», որ կը գտնուի մեր Չեռագրատան ԺԼ. երորդ և այլ Ոսկեփորիկներու մէջ (Խաթին Դ. 1999) շատ ուշագրաւ է: Այս գրութեան մէջ՝ Թէ և տեղ տեղ մեծամեծ տարբերութիւններ կան Մեթոդիոսեան Յայտնութեան, սակայն ընդհանուր բովանդակութեան, — ըստ մակագրին, — իմաստը նոյն է, մանաւանդ Նեոի ծննդեան և գործոց, տապանակի բացման, խաչի երևման, և այլն և այլն, ամբողջական հատուածներն բառ առ բառ նոյն են: Եթէ ապացուցուած ըլլար, թէ այս գրութիւնս իրօք Հիպոդոիտեայ վաւերական գործ մ'է, այն ատեն Մեթոդիոսէն աւելի հնագոյն աղբիւր մ'այլ պիտի ունենայինք, գէթ վասն Նեոի և կատարածի աշխարհիս հատուածոց. — վասն զի մեթոդիոսեան գրուածքին միւս ընդարձակ մասը՝ բոլորովին տարբեր պարունակութիւն և բնագոյնն ունի:

1. Տես տպագ. Շահնագրեանի, ի Պարիս, յէջ 199:

2. Աստի դիտել արժան է, որ Նեոին և Քրիստոսի գալստեան վրայ Ոսկեբերան, Եպիփան և այլ Սուրբ Հարբ իսկ ճառեր և մեկնութիւններ գրած են, ինքր ի շատէ նոյն իմաստները յեղյեղելով: Սակայն հետեւեալ գրութիւնը. «Ե-

աղաւաղ լեզուն, տառապարծուցած յատուկ ա-
նուանք և այն եօթնազլխեան թագաւորաց յա-
ւելուածներն՝ ինչպէս և վերջին գառաստանի
ընդարձակ նկարագրութիւնն, — որոնք Մեսրով-
բէն և Սիւնեցիէն շատ վերջ կատարուած իրեր
կը թուին ներկայացնել, — նոյնը լիովին կը
հաստատեն: Գ. Դիսելու ենք, որ Ի. Ոսկեփո-
րիկին մէջ Մեթոդիոսի Տեսչեանն անմիջա-
պէս կը յաջորդէ Ագաթրոնի Տեսչին, որ բաց-
առութեամբ Հայոց վրայ կը դառնայ և առաջ-
նայն շարաքանութեան բնադրոյնն ունի: Արդ՝
Ագաթրոնն այս եթէ ասորի մէկն եղած համա-
րինք, եթէ կեղծ հայազգի օմն, անոր միակ
նպատակն եղած կ'երևի՝ Հայոց վերաբերեալ
մասն ընդարձակել, առանձին զխով մի, որոնց
անունն հազիւ կը յիշուի մեթոդիոսեան Տես-
չեան մէջ: Եւ իրօք ասոր շօշափելի ապացոյց
են Արտանայկանոսի թագին, խաչի և այլ
տեղիքը, զորս կը ջանայ Տրդատայ և Հայոց
վրայաց հետ զուգել: Այս երկու Տեսչեանց ամ-
բողական հրատարակութիւնը՝ բաղդատու-
թեամբ, — ինչպէս նաև մանրամասն քննութիւ-

նը, — ուրիշ պատեհի մի կը թողունք. զի մեր
նպատակն է հոս ցոյցնել Մեծին Ներսիսի ըն-
ծայուած Տեսչեան յոյն բնագիրն, անոր հայե-
րէն թարգմանութեան հետ համաձայնող մի
քանի տեղեաց համեմատութեամբ. և անոր
անվաւերութեան հետ՝ երանի՜ թէ վերնային
հայ ժողովրդեան միջէն նաև այն լքուցիչ և
փաստակար ազգացութիւնները, զորս սխալ հաս-
կացողութիւնն և նախապաշարմունք՝ բեւեռած են
նոյն իսկ կորովի սրտերու մէջ: Առայս համեմա-
տենք, — միայն այն հատուածները, — Ի.
Ոսկեփորիկի հետ, որոց նմանութիւնն արևու-
լուսէն աւելի պայծառ է և շօշափելի: Թէպէտ
և լատին թարգմանութեան՝ Նեոնի և վերջին
գառաստանի վրայ մեզ ընծայած մասը խիստ
անշնայն է և հակիրճ, սակայն զայն ևս դնենք
ի միջի՝ իրբև կամուրջ մի և կամ՝ միացորդս
մեթոդիոսեան հին բնագրին: Իսկ ուր կը պա-
կասին լատինն և Ներսիսի կենսագրութիւնը՝
Սոս. Օրբելեանի մեզ աւանդած հատուածքը՝
մասամբ կը լրացնեն զայն, ցոյցնելով նախկին
հայ խմբագրութեան մի զոյլութիւնը:

Ի. ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՄԵԹ. ԱՍՏ. ԹԱՐԳՄ.

ԿԵՆՍ. ՄԵՏԻՆ ՆԵՐՍԻՍԻ

Յէջ 40 և 42, « Յայնժամ՝
փութանակի յարեցէ ի վերայ
նոցա թագաւորն Հելլենացոց
և Հոլմայեցոցն, որ են
Փրանկը. մասնին իսմայելա-
ցիք ի սուր և ի գերութիւն. և
լինի եօթնպատիկ լուծն Հոլի-
մայեցոցն ի վերայ նոցա, և
վախճանեացէ զնոսա բազում
նեղութեամբ, և սոլով և ծա-
րաւով և տանջանօք » ..

Յէջ 57. վասն Նեոնի.

« Եւ նշան յայտնելոյ Նե-
ոնն այս է. Թորժամ լցցի եր-

G. pag. 732 «Tunc
subito insurget super eos
rex Graecorum sive Ro-
manorum... H. pag. 732
in manu regis Romano-
rum tradentur in gladio
et captivitate et erit... im-
ponens jugum suum su-
per eos septies ultra quam
erat jugum eorum... pre-
hendet eos angustia ma-
gna, fames, sitis et tribu-
lationes »:

« Et cum
complebuntur 10. anni,

Յէջ 92, 93. « Եւ յետ
այսորիկ փրկութիւն ամենայն
աշխարհաց բրիստոնէից յարի-
ական զօրացն եղիյի Հոլմա-
յեցոց, որ անուանին Փռանկ-
ցիք ընդ լծով ծառայութեան
Հոլմայեցոցն. և մարդիկ ա-
ւաղեսցեն զանցեալսն և զոչ
հանդիպեալսն այնմ բարեաց »:

Յէջ 94. « Արդ նշան յայտ-
նելոյ Նեոնինն այս է. յորժամ

1. Որ կը սկսին Ի. Ոսկեփորիկի 24 իջն (= լատ. 730, Գ. Թուահամարին) և կ'աւարտի
73 իջի հատուածով: Իսկ Մեսրովը երէց՝ Ի. Ոսկեփորիկի 40 իջի հատուածով կը սկսի և
կ'աւարտի նոյնպէս յէջ 73, « Ոչ օձն խաբող և ոչ կին պատրող » հատուածով: Վերջինս աւելի
միակողմանի է նրկթոց յառաջընթացութեան կամ փոխառութեանց կողմանէ քան Ստեփ. Օրբէ-
լեան. զի Երուսաղեմայ և խաչի գերութեան ի ձեռն Պարսից, Նեոնի և վերջին դատաս-
տանի հատուածները միայն փոխ առած է մեթոդիոսեան Յայտնութիւնէն:

կիր խռովութեամբ, պակասի
բարձր իշխանութիւն Հոռ(վ)-
մայեց(ւ)ոց... Եւ որպէս ծանու-
ցաւ ի ձեռն Դանիէլի չորից
զազանացն ։

Յէջ 58. « Առիւծն՝ թաղա-
ւորն Մարաց. և արջն՝ Բարե-
լաց(ւ)ոցն. Ունձն (ինձն) թա-
ղաւորն Պարսից ։ Էր և չորրորդն
անեղ և զարմանալի, որ ուտէր
և մանրէր զերկիր՝ որ են Հոռ(վ)-
մայեց(ւ)ոց թաղաւորութիւնն.
զի որպէս Քրիստոս ի պակասել
իշխանութեան Յուդայի եկն,
նոյնպէս և հակառակն նորա՝
ի պակասել թաղաւորութեան
Հոռ(վ)մայեց(ւ)ոց ։

« Արդ ծաղկի նախ անգթու-
թիւն, և զուտանաց սէր բուսա-
նի. և լինի սովք և սրածու-
թիւնք և սասան. ւթիւնք, որպէս
Տէրն ասէ. բազում զուշակ-
մունք եղիցի » ։ ...

Յէջ 59. « Արդ՝ մի՛ կարծէք
թէ սատանայ է նա, կամ զեւ
այլ մարդ է ապականեալ մատը.
ի սոհմէ մարդկան, ի սերմէ
հօր, յորովայնէ մօր. ծնանի ի
Քորազին, և սնանի ի Բեզա-
յիդայ, զարգանայ և մեծանայ
ի Կափառնաւումն » ։

« Ի վերայ միոյ տասանց իշ-
խանութեան որ բաժանեալ լի-
ցի » ։

« Թայնժամ ի մինն թաղա-
ւորէ ինքն, և զերեքն սպանա-
նէ, և զայլն զբռամբ ածէ. և
թաղաւորէ ժամանակս երիս և
կէս ժամանակի » ...

et dimidius, et apparebit
filius perditionis... tunc
destruetur omnis princi-
patus et potestas.. Est
autem hic de tribu Dan,
secundum prophetiam
Patriarchae Jacob » ։

» Faciet enim tunc si-
gna et prodigia multa, su-
per terram inertia... sicut
et Dominus explanavit in
Evangelio

Exposuit sicut ex per-
sona generis humani, cum
homo sit carnalis ex se-
mine viri, utero mulie-
ris » ... « Hic nascetur
Charasaim et nutrietur in
Bethsaïde et regnabit Ca-
pharnaum » ..

լցցի՝ երկիր խռովութեամբ՝
յիս բարի ժամանակին և բարձ-
ցի իշխանութիւն Հոռովմոց » ,

« Եւ որպէս ծանուցաւ Դա-
նիէլի վասն չորս զազանացն.
մատակ առիւծն՝ որ է Մարաց
թաղաւորութիւնն, և արջն՝ որ
է Բարեյացոցն, և ինձն՝ որ է
Պարսից. և չորրորդն որ անեղ
և զարմանալի ցուցան, որ ու-
տէրն և մանրէր զերկիր, որ է
Հոռովմոց թաղաւորութիւն. զի
որպէս ի զալստեանն Քրիստոսի
բարձաւ իշխանութիւն Խորայե-
լի, նոյնպէս և յայտնել պրդ-
ծոյն՝ բարձցի իշխանութիւն Հո-
ռովմոց » ։

« Յառաջագոյն ծաղկի ան-
գթութիւն և ցամաքի սէր, և
լինի սովք և սասանութիւնք
և սրածութիւնք... այս ի Տեառնէ.
և բազում զուշակմունք եղիցին
յաղագս յայտնելոյ նեոխն » .

Յէջ. 95. « Արդ՝ մի՛ կար-
ծէք թէ սատանայ է կամ զեւ ի
զօրաց նորա . ոչ, այլ մարդ ա-
պականեալ մտօքի սոհմէն Դա-
նայ. և ծնանի ի Քորազին գեղ-
ջէ յազգէ Խորայեյի, և անուն
հօր նորա Հռովմեայ և մօր
նորա Ներկիմիւնէ, և անուն
նորա Հռասաւմ » ։

« Ապա բաժանի թաղաւ-
րութիւն Յուսաց ընդ տասն զա-
ւազան » ։

« և մինն ինքն իցէ ի թա-
ղաւորացն, և զերիս թաղա-
ւորսն սպանանիցէ և զայլսն
զձեռամբ ածիցէ. և ինքն աի-
րեսցէ ամենեցուն. թաղաւ-
րեսցէ ժամանակս երեք և կէս
ժամանակաց » ։

Թէլ 60. « Եւ զսուտ զօրու թեանցն՝ զոր առնէ առաջօք և ոչ ճշմարտութեամբ. զի զայ և զօրանայ ի սատանայէ, յորում ծնունդն նորա զօրութեամբ նուրա է » :

Թէլ 62. « Յայնժամ մը աւան որդին կորստեան յերուսաղէմ և նստի ի տաճարին Աստուծոյ պատուեալ յամենեւնի ցունց իբրև զԱստուած. և որ հաւատան ի նա ընկալցին նշան ի ճակատս իւրեանց... բազում բարկութեամբ յարձակի ի վերայ նոցա և սպանանէ զանթիւ բազմութիւնս, սրով և հրով բազում անթիոնակ տանջաւ նոր » :...

« Փութապէս առաքէ զկամարաւ իւր զԵնոյիք և զԵղիաւ. և զսուրբ մարգարէս իւր, զոր պահեաց կարապետ յաւուրս աշմիկ. զի յետին զայստեանս Եղիա էր կարապետ աւուրս աշմիկ, որպէս առաջնոյն Յովհաննէս : Եւ սորբա եկեալ յանդիմանն զհակառակողան և զօրացուցանն զհաւատացեալսն, զի զան և յանդիմանն առաջի ամենայն մարդկան զխաբէութիւն և զմելօրութիւն նորա, ասելով, թէ առաջօք և խաբէութեամբ է զործ նորա, և ոչ ճշմարտութեամբ. և մելորեցուցանէ զմարդիկ և մատնէ ի կուրստ » :

Թէլ 64. « Եւ կալեալ զԵղիա և զԵնոյիք՝ չարչարէ բազում և զառն տանջանօք. և սպանանէ զնոսս սրով, և լըցեալ խնդութեամբ, ասէ .

733. G. « In omnibus suis signis fallacissimus deceptionum prodigiis seducet... »

« Ingredietur enim hic filius perditionis in Jerusalem, et sedebit in templo Dei sicut Deus » ...

« Cumque multiplicata fuerit tribulatio dierum illorum a filio perditionis, non sinet divinitas aspicere perditionem generis humani .

Continuo mittet suos famulos sincerissimos... Enoch et Heliam,

ad redarguendum eum, et palam omnibus gentibus corripient ejus seductionem et ostendent, mendacem coram omni homine et nihil esse. Et quia propter interritum et perditionem multorum exit de templo » .

H. « Videns ergo seductor sese durissime increptum, ab universis contemptum, furore et iracundia calescens, interficiet illos Sanctos Dei » .

Թէլ 96. « Եւ զամենայն արբանեկութիւն սատանայի յինքն կրէ . որոյ զալուսան իսկ ազգեցութեամբ սատանայի է. և արասցէ նշանս և արուեստս աւուրս հազար և երկերիւր և վաթսուն » :

« Արդ՝ նստցի որդին կորըստեան յեկեղեցւոյ Աստուծոյ, և սկսանիցի հայնոյել զԱստուած, և իւր պահանջէ զերկըր պապութիւնն մատուցանել իբրև Աստուծոյ. և ցուցանէ զանձն իւր Աստուած, և հպարտանայ ի վրայ ամենայն անուանեալ աստուածոց և միայն զինքն տացէ պաշտել փոխանակ Աստուծոյ, և ընու չարեօք և պըղծութեամբ զերկիր »

« Յայնժամ առաքէ Աստուած զերկուս մարգարէսն՝ Ենոյիք և զԵղիաս ի փրկութիւն մարդկան, որ զգուշացուցանեն զհաւատացեալս... Արդ՝ որպէս յառաջին զայստեանն Յովհաննէս եղև կարապետ Քրիստոսի, նոյնպէս և յերկրորդ զալստեանն Եղիա պահի կարապետ Ենովքաւ հանդերձ : Արդ նոքա երկրորեանն զայցեն և ասացեն. Մի՛ հաւատայք պղծոյն՝ որ կայ ի սուրբ սեղւոյն. զի նա է վիշապն մեծ և օձն կամակար. պատրանօք խաբէ զձեզ և արուեստիք սուրօք... սուս Քրիստոս է զա, և մարգարէիւք սուրբ խորամանկել կամի զպաշտօնեայ ի աշխի » :

Թէլ 98. « Յայնժամ ըմբռնին ի ձեռն նորա Ենովք և Եղիա, և պիղծն այն չարչարէ զնոսս անհնարին հարուածովք, և հայնոյէ զԱստուած բանիւք բազմօք... սպանցէ զԵնովք և զԵղիա առաջի բազմաց և ասէր .

Եւ ոչ սոքա՝ որ անմահ կարծէին,
կարասցեն գերծանել ի ձեռաց
իմոց . և բազում հայհոյութիւնս
խօսեսցի

Յէջ 65. « Եւ ասեն ցնա,
եթէ դու ես Քրիստոսն և յի-
րաւի եր սքանչելիք քո, օղնեա
մեզ ի նեղութեանս, զի ա՛հա
կորնչիմք ի սովոյ և ի ծարա-
ւոյ » ...

Յէջ 67. « Եւ յանկարծակի
յական թօթափելոյ լինի շարժ-
մունք անհզ և որոտմունք » ...

Յէջ 67. « Յայնժամ լու-
սափայլ երևի նշանն արքունա-
կան ի զօրացուցանել զապաւի-
նեալքս ի նա ի պարծանս ար-
դարոց » .

Pag. 733, H. « Tunc
apparebit Signum adven-
tus Filii hominis, et veniet
in nubibus coeli cum glo-
ria caelesti,

Յէջ 68. « Յղանան մատունք նշանից (նը-
շուից) ամենայաղթ խաչին ի գօրութիւն ոտրբ
եկեղեցեաց: Եւ լուսաւորք նուազեցցին ի լոյս
սուրբ խաչի. կոծեսցին ազգ, զի զայ գատել
զոչ դրոշմեալսն նովաւ, որ ոչ ծանեան զյաղ-
թութիւն սուրբ խաչին նշանին »:

« Յայնժամ զայցէ յերկնից անճառ փառօք
թաղաւորն Քրիստոս. զալարին երկինք և հալին
իրև. զմով ի հրոյ: Գեան հրեղէն և մթնազոյն
հոսի ի վերուստ ի վայր, մաքրելով գերկիր ի
յանօրէնութեանց և ի չար գործոց. լսին ձայնք
լուսեղէն զօրացն. շարժին գօրութիւնք երկնից.
փողն սասաթիկ հնչմամբ քոչէ ի գերեզմանս,
թէ արիք ընդ յառաջ փեսային, ո՛վ մեռեալք .
զի եկն եհաս հայրենի փառօք Որդին Աստու-
ծոյ: Արիք արդարք և մեղաւորք, ընկալարուք
զհատուցումն ձեր: »

Յէջ 70. « Յայնժամ յառնեն ի քթթել
ական արարածք ամենայն, և զգնաուն զանա-
պական մարմինսն փութապէս: Ապա մեղա-
ւորքն երևին ստուերազոյն մարմնով, զի ներ-
կեալ են գործովք չարութեան: Եւ խնդան ար-
գաբքն պայծառապէս մարմնով և բարձրանան
յերկրէ լուսեղէն ամպովք ի հանդիպումն փե-
սային Քրիստոսի. և հիանան վերնիքն ընդ

Տեսէք զգօրութիւն իմմեծ. զի
ի բազում ամաց անմահ լեալ
էին զդեպ, այլ ոչ կարացին ապ-
րիլ ի ձեռաց իմոց. և խնդու-
թիւն լինի սուա մարգարէիցն,
ի տեսանել զմահ ճշմարիտ
մարգարէիցն »:

« Եւ ասեն ցնեան. Տոր
մեզ օգնութիւն ի նեղութեանս.
զի սպառիմք առ հասարակ » ...

Յէջ 99. « Յանկարծակի
յական թօթափել լինի շար-
ժումն անհզ որոտման » ...

Յէջ 100. « Յայնժամ լու-
սափայլ երևի նշանն արքունա-
կան ի զօրացուցանել զապաւի-
նեալսն ի նա՝ ի պարծանս ար-
դարոց » .

Յէջ 100. « Յղանան մատունք ամենա-
յաղթ նշանին և գօրութիւն սրբոյ եկեղեցւոյ,
և առնուն հասակ ընդ աւերուական խաչին. և
լուսաւորք նուազին ի լուսոյ նորին: Կոծեսցին
ազգք, զի զայ ի դատել զոչ դրոշմեալսն նովաւ՝
որ ոչ ծանեան զնա աւերուեան նշան »:

Յայնժամ զայ յերկնից անճառ փառօք թա-
ղաւորն փառաց. զալարին երկինք և հալին իբ-
րև. զմով առաջի հրոյ. գետք հրեղէն և մթա-
զոյն հոսին ի վերուստ ի վայր՝ մաքրելով գեր-
կիր յանօրէնութեանց և ի պիղծ գործոց: Լսին
ձայնք լուսեղէն զօրացն. շարժին գօրութիւնք
երկնից, և փող սասաթիկ հնչէ ի գերեզմանս.
արիք մեռեալք ընդ առաջ փեսային, քանզի
եկն եհաս հայրենի փառօք. արիք արդարք և
մեղաւորք, ընկալարուք զհատուցումն »:

Յէջ 101. « Յայնժամ կոծեսցին անմխի-
թար սզով արարածք անպարաստք, և զգն-
նուն փութապէս զանանցական մարմինս. ապա
մեղաւորքն երևին ստուերազոյն մարմնով,
քանզի ներկեալք լինին գործովք չարաց իւ-
րեանց. յառաջազոյն ևս քան անձամբ՝ ընա-
րեալքն պայծառապէս մարմնով. բարձրանան
յերկրէ լուսեղէն ամպովք ի հանդիպումն Քրիս-

Ի. ՈՍԿԵՓՈՐԻԿ

ԿԵՆՍ. ՄԵԾԵԻՆ ՆԵՐՍԻՍԻ

նոսա, և ասեն. Զի՞նչ գործեալ է սոցա յերկրի որ երամով գան առ Տէր զուարճացեալք :

Պատասխանի տացէ նոցա Տէր. Սրբա են բարեկամ զինուորքն իմ, որ ուրացան զանձինս իւրեանց, մեկնեցան յերկրէ և խաչեցին զանձինս իւրեանց կարեօք և ցանկութեամբ վասն իմ: Եւ արդ ես տաց զուրախութիւն իմ նոցա անսպառ: Իբրեւ լսեն հրեշտակք զայս, ասեն. Դուք էք օրհնեալք յԱստուծոյ, արդ ուրախ լընուք յուրախութիւն ձեր: :

Յէջ 71. « Յայնժամ նստի թագաւորն փառաց յաթոռ իւր և հրեշտակք սպառաւորեն նմա: Եւ նախ կապեցի սատանայ և առաքի ի վին տարտարոսին, և չարալլուկ կապին զօրքն նորա փէքն, որ ուսուցանէին մարդկան զգործս աղտոյղիս. զի ոչ են արժանի նոցա ի գատաստան մտանելոյ, զի չիք պատասխանիք տալոյ նոցա առաջի Աստուծոյ: »

Յէջ 72. « Կան և ընդ յայմէ նորա արդարքն մեծաւ յուսով, և կան յահեկէ նորա մեղաւորքն մեծաւ ամօթով ի պահանջումն աւնայառ զործոց նոցա: Յատենա զինն, դպրու իրենք բանին. լինի անեղ դատաստան: »

Յէջ 72. « Յայնժամ ասէ թագաւորն ընդ յայմէ կողմեանս. Եկայք աւրհնեալք Հօր ի մոյ. ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքաւ յուրեան ի սկզբանէ աշխարհի. և շնորհէ թագաւորն արժանաւորացն զպսակն կենաց զբիւրակենայ: »

Յէջ 72. « Յայնժամ կապեալ իրձունք ուրմանցն տապալին ի հուրն, և փակի նոցա դուռն ուրախութեան հարսանեացն, և երթիցեն նոցա ի սանջնաքն յաւիտենական: »...

Յէջ 73. « Եւտ նորա երկինք և երկիր նորոգի, և ոչ լինի յերկիր աշխատութիւն և քրտունք, ոչ ի մարդիկ ցաւ և տրտմութիւնք. ոչ օձն խաբող, ոչ կինն պատրող, այլ կենան յաւիտենականք, յորմէ մերժեալ են տրամուլթիւնք և հեծութիւնք. և թագաւորեցէ Տէր յաւիտեան Աստուած քո, Սիոն, յազգէ մինչև յազգ, և թագաւորութեան նորա ոչ քոյ վախճան. զի նմա վայելէ փառք պատիւ և երկիր պագութիւն յաւիտենան. ամէն: »

տոսի. և հիանան վերինքն ընդ նոսա և ասեն. Զի՞նչ է գործեալ սոցա յերկրի, զի երամովին գան առ Տէր զուարճացեալք:

Պատասխանի տացէ նորա Տէր, թէ Սրբա են բարեկիր զինուորք իմ, որ ուրացան զանձինս իւրեանց և մեկնեցան յերկրէ, և ի խաչ հանին զանձինս իւրեանց կարեօք և ցանկութեամբ հանդերձ վասն սիրոյ իմոյ. և արդ ես տաց սոցա զուրախութիւն իմ զանսպառ: Եւ մինչ լսիցեն զայս հրեշտակք, ասիցեն. Դուք էք օրհնեալք ի Տեառն. արդ ուրախ լընուք յուրախութեան ձերում: :

Յէջ 102. « Յայնժամ նստի թագաւորն փառաց յաթոռ իւր. և հրեշտակք անիւ սպասաւորեն նմա. և յառաջագոյն կապի սատանայ առանց հարցափորձելոյ, և առաքի ի վին տարտարոսի. և չարալլուկ կապին զօրք նորա ձաւակողմանք, որ ուսուցին մարդկան զգործս չարս. ոչ են նոցա արժանի իղատաստան մտանել, զի չիք պատասխանի առաջի բեմի նորա: »

« Եւ կացցեն յայմէ նորա բարեացն յուսով՝ արդարքն. կան և մեղաւորքն ամօթով մեծաւ՝ ի պահանջումն իւրաքանչիւր զործոց: Ատենա զինն և զպրութիւնք բանին: »

« Եւ յառաջ քան զայտոսիկ ընծայէ թագաւորն երկայնիկն պսակն արժանաւորացն, ասելով. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհի: »

« Իրձունք կապին որպէս որոմն և ձգին ի հուրն անշէջ: Իսկ ոմանց և դրունքն փակին ուրախալից հարսանեացն, զի մի՛ հնար լիցի զփեսայն երկնաւոր հայել և տեսանել: ասելով ընդ նոսա. Ոչ չիտեմ զձեզ, ի բաց կացէք յերեսաց իմոյ: »

Յէջ 103. « Նորանան երկինք, նորոգի երկիրս: Կանաչացեալ սազարթանայ վայելչութեամբ, և լինի արքայութիւն երեսնաւոր. . . և ոչ լինիցի յերկրի աշխատութիւնք և քրտունք. ոչ օձ խաբող և ոչ կին պատրող. այլ լինիցին ծառք անթառամելիք պտղովք, և մեկնեալ ցառք և արտմութիւնք. այլ լինի միայն ուրախութիւն և փափկութիւն. և ոմանց յերկրի տացէ զարքայութիւն: »...

Հ. Բ. Սարգիսեան